1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

## ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0054 ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26, ընդունարան 370-298; քարտուղարություն 370-274, ֆաքս 370-296

№ 4/7/3 «27» 06 2018 թ.

Ձեր

<<Արմավիրի կաթի գործարան>> ԲԲԸ-ի տնօրեն
պարոն Կ. Հարությունյանին
ՀՀ, ք. Արմավիր, Սայաթ-Նովա 2
Էլ. հասցեն՝ armavirfood@mail.ru
ՀՎՀՀ 04403595

ՀՀ ոստիկանության զորքերի և <<Արմավիրի կաթի գործարան>> ԲԲԸ-ի միջև 19.02.2018թ. կնքված N ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-18/2/Բ/1/ՊԾ/2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր հացի մատակարարումն իրականացնել պայմանագրի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պայմանների, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017թ. (սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին) թիվ 85-Ն հրամանի համաձայն:

Սակայն ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության համաձայն ընկերության կողմից մատակարարումը իրականացվել է ոչ պատշաճ՝ այն է մատակարարման ժամկետների պարբերաբար խախտմամբ, մատակարարումը կատարվում է այնպիսի փոխադրամիջոցներով, որոնց համար տրամադրված չէ սանիտարական անձնագիր, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից հացի արտադրամաս այցելությունների արդյունքում պարզվել է, որ արտադրամասում գործնեությունը իրականացվում է սանիտարահիգիենիկ պայմանների ակնհայտ խախտումներով:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը ՀՀ ոստիկանության զորքերը 2018թ. Հունիսի 27-ից միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը, որի մնացորդային արժեքը կազմում է 15641334 (տասնհինգ միլիոն վեց հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ <<Արմավիրի կաթի գործարան>> ԲԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում 900005000758 հաշվեհամարին փոխանցել 98325 (իննսունութ հազար երեք հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ՝ որպես տուգանք (պայմանագրի 6.3 կետի համաձայն), ինչպես նաև ընկերությունից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար, որպես պայմանագրի կատարման ապահովում (տուժանք) 1564133 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար հարյուր երեսուներեք) ՀՀ դրամի չափով:

հրամանատարի պարտականությունների
ժամանակավոր կատարող

գնդապետ Ս. Հակոբյան